

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2017թ. գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

04 հունիսի 2017թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 20 անդամներից 17-ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ., պրոֆ. Ա. Սադյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ. Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Ֆարմացիայի ինստիտուտի ամբիոնների վարիչների հաշվետվությունները:
2. Պետական քննությունների, մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների արդյունքների քննարկում:
Զեկուցող՝ Ա. Սադյան
3. Ընթացիկ հարցեր:
 - 3.1 Ֆարմացիայի ինստիտուտի տպագրության համար նախատեսված նյութերի ձևակերպման փորձագիտական հանձնաժողովի կազմի և կանոնակարգի վերահաստատում:
Զեկուցող՝ Ռ. Հովհաննեսյան
 - 3.2 Ֆարմացիայի ինստիտուտի մեթոդական խորհրդի կազմի և կանոնակարգի վերահաստատում:
Զեկուցող՝ Ս. Պետրոսյան

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ և ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Ֆարմացիայի ինստիտուտի ամբիոնների վարիչների հաշվետվությունները:

Լսեցին՝

1.1 ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ, բ.գ.դ. Ռ. Հովհաննեսյանի հաշվետվությունը՝ 2016 - 2017 ուսումնական տարում ամբիոնում կատարված աշխատանքների վերաբերյալ (հաշվետվությունը կցվում է): Նա տեղեկացրեց, որ Կենսաբժշկագիտության ամբիոնը, որպես ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի կազմում գործող ամբիոն, կազմավորվել է 2017թ.-ին: Ռ. Հովհաննեսյանը նշեց, որ 2016-2017 ուսումնական տարում ամբիոնի աշխատանքները կազմակերպվել են հաստատված ուսումնական և աշխատանքային պլանների համաձայն: Հաշվետու տարում ամբիոնի աշխատակիցների կողմից ղեկավարվել են 9 ավարտական և 17 մագիստրոսական աշատանքներ: Ռ. Հովհաննեսյանը հավելեց նաև, որ Դասախոսը ուսանողի աչքերով սոց. հարցման արդյունքում կենսաբժշկագիտության ամբիոնի դասախոսների միջին գնահատականը կազմել է 4,81 միավոր և 2016-2017 ուս. տարում ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտահետազոտական գործունեության արդյունքում տպագրվել են 10 գիտական աշխատություններ, որոնցից 1 մենագրություն, 7 հոդված (2-ը՝ միջազգային ամսագրերում) և 4 միջազգային գիտաժողովների զեկուցման թեզիսներ: Ռ. Հովհաննեսյանը հավելեց նաև, որ հաջորդ ուս. տարում ավելի կհստակեցվեն ուսումնական ծրագրերը, կհամապատասխանեցվեն ինստիտուտի ուղղվածությանն ու ստանդարտներին:

1.2 ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմաբիմիայի և ֆարմակազնոգիայի ամբիոնի վարիչ, բ.գ.թ. Հ. Սիմոնյանի հաշվետվությունը՝ 2016-2017 ուս. տարում ամբիոնի գործունեության մասին (հաշվետվությունը կցվում է): Նա գիտխորհրդի անդամներին ներկայացրեց ամբիոնի հաստիքացուցակը, տեղեկացրեց, որ հաշվետու տարում ամբիոնն իր աշխատանքներն իրականացրել է հաստատված ուսումնական և աշխատանքային պլանների

համաձայն, պարբերաբար հրավիրվել են ամբիոնի նիստեր, որտեղ քննարկվել են ուսումնական և գիտական գործընթացներին վերաբերվող հարցեր: Հ. Միմոնյանը նշեց, որ ամբիոնի աշխատակիցների կողմից ընդհանուր առմամբ ղեկավարվել են 10 ավարտական աշխատանքներ և 30 մագիստրոսական թեզեր, սոցիոլոգիական հարցումների արդյունքում ամբիոնի դասախոսների միջին գնահատականը կազմել է 4,80 միավոր և ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական գործունեության արդյունքում տպագրվել է մեկ ուսումնական ձեռնարկ, մեկ մենագրություն, 5 գիտական հոդված (որոնցից 2-ը՝ միջազգային բարձր ազդեցության գործակից ունեցողամագրերում) և 2 միջազգային գիտաժողովների զեկուցման թեզիսներ:

1.3 ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի վարիչ, կ.գ.թ., դոցենտ Ա. Հովհաննիսյանի հաշվետվությունը (հաշվետվությունը կցվում է): Ա. Հովհաննիսյանը համառոտ ներկայացրեց ամբիոնի կադրային կազմը, ուսումնամեթոդական գործունեությունը և նշեց, որ ամբիոնն իր աշխատանքները կազմակերպել է հաստատված ուսումնական և աշխատանքային պլանների համաձայն: Ա. Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ ամբիոնի աշխատակիցների կողմից ղեկավարվել են 11 ավարտական աշխատանքեր և 23 մագիստրոսական թեզեր: Հաշվետու ուս. տարում ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտակահետազոտական գործունեության արդյունքում տպագրվել է 4 հոդված, 2 միջազգային գիտաժողովի զեկուցման թեզիսներ և «Դասախոսը ուսանողի աչքերով» սոց. հարցման արդյունքում ամբիոնի դասախոսների միջին գնահատականը կազմել է 4,71 միավոր, բոլորի անհատական գնահատականը բարձր է 4-ից:

Ելույթ ունեցան՝ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար, գիտխորհրդի նախագահ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սադյանը, ով նշեց, որ հատկապես մեծ ուշադրություն պետք է դարձնել դասավանդվող առարկաների ծրագրային համապատասխանությանը: Ելույթ ունեցան նաև գիտխորհրդի անդամներ Բ.Գ.Դ. Ռ. Հովհաննեսյանը, ք.գ.թ. Ս. Պետրոսյանը, ովքեր հետաքրքրվում էին դեղատնային և գործարանային պրակտիկաների

անցկացման կարգի մասին: Ա. Սաղյանը նշեց, 2017-2018 ուս. տարում նախատեսվում է ուսանողների գործարանային պրակտիկան կազմակերպել Հայկենսատեխնոլոգիա ԳԱԿ-ում գործող տարբեր արտադրամասերում, մասնավորապես, «Նարինե», «Դեղապատրաստուկների արտադրություն» և այլն: Ելույթ ունեցան նաև փոխտնօրեն Ս. Վարդապետյանը, ք.գ.թ. Ս. Ափոյանը, ք.գ.թ. դոցենտ Կ. Պետրոսյանը, ովքեր առաջարկեցին դրական գնահատել ամբիոնների վարիչների կողմից կատարված աշխատանքները և հաստատել հաշվետվությունները:

Որոշեցին՝ (միաձայն)

Հաստատել ամբիոնների վարիչների հաշվետվությունները:

2. Պետական քննությունների, մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների արդյունքների քննարկում:

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար Ա. Սաղյանին, ով նշեց, որ այս ուսումնական տարում առաջին անգամ պետական քննություններն անցկացվեցին բանավոր կարգով, ինչը կարծես թե ավելի արդյունավետ էր և հնարավորություն տվեց ուսանողներին դրսևորել իրենց գիտելիքների ողջ պաշարը:

- Ինչ կարծիքներ կա՞ն այս հարցի վերաբերյալ:

Ելույթ ունեցան՝ Փոխտնօրեն Ս. Վարդապետյանը, ք.գ.թ., Ռ. Հովհաննեսյանը, կ.գ.թ. Ա. Հովհաննիսյանը, ովքեր նշեցին, որ այս կերպ աշխատանքն ավելի արդյունավետ կազմակերպվեց: Ս. Վարդապետյանը փաստեց, որ ն' ուսանողները և՛ քննական հանձնաժողովի անդամները գոհ են բանավոր քննության արդյունքներից: Գիտխորհրդի մյուս անդամները ևս միաձայն փաստեցին, որ բանավոր պետական քննությունն, իսկապես, արդարացված է: Ա. Սաղյանը առաջարկեց առաջին պետական քննության հարցաշարում ընդգրկել խիստ մասնագիտական հարցերը, իսկ երկրորդ պետական քննության հարցաշարում ընդկրկվեն փոքր ինչ պարզեցված հարցեր՝ ցածր ՄՕԳ ունեցող ուսանողների համար: Գիտխորհրդի ներկա անդամները ևս համաձայնեցին Ա. Սաղյանի առաջարկության հետ և

որոշեցին այն ի նկատի ունենալ 2017-2018 ուս. տարվա պետական քննությունների հարցաշարերը կազմելիս:

Որոշեցին՝ (միաձայն) դրական գնահատել 2016-2017 ուս. տարում անցկացված պետական քննությունների, մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների արդյունքները:

3 Ընթացիկ հարցեր:

3.1 Ֆարմացիայի ինստիտուտի տպագրության համար նախատեսված նյութերի ձևակերպման փորձագիտական հանձնաժողովի կազմի և կանոնակարգի վերահաստատում:

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի տպագրության համար նախատեսված նյութերի ձևակերպման փորձագիտական հանձնաժողովի նախագահ Բ.Գ.Պ. Ռ. Հովհաննեսյանին, ով գիտխորհրդի անդամներին ներկայացրեց հանձնաժողովի կանոնակարգի նախագիծը: Ռ. Հովհաննեսյանը ներկայացրեց հանձնաժողովի հիմնական խնդիրները, կազմը և աշխատանքի կազմակերպման ընթացակարգը: Նա առաջարկեց աշխատանքներն ավելի արագ և արդյունավետ կազմակերպելու համար հանձնաժողովի կազմում ընդգրկել նաև Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի վարիչ, Կ.Գ.Թ., դոցենտ Ա. Հովհաննիսյանին և վերահաստատել հանձնաժողովի հետևյալ կազմը՝

Նախագահ՝	Բ.Գ.Պ. Ռ. Հովհաննեսյան
Անդամներ՝	Բ.Գ.Պ. Ի. Սեկոյան
	Կ.Գ.Թ. Ա. Հովհաննիսյան
	Ք.Գ.Թ. Ա. Մկրտչյան:

Որոշեցին՝ (միաձայն) վերահաստատել տպագրության համար նախատեսված նյութերի ձևակերպման փորձագիտական հանձնաժողովի նոր կազմը և կանոնակարգի նախագիծը:

3.2 Ֆարմացիայի ինստիտուտի մեթոդական խորհրդի կազմի և կանոնակարգի վերահաստատում:

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի մեթոդական խորհրդի նախագահ Ք.Գ.Թ. Ս. Պետրոսյանին, ով գիտխորհրդի անդամներին տեղեկացրեց ԵՊՀ գիտական

խորհրդի թիվ 6/4 որոշման մասին, որի համաձայն ուժը կորցրած է ճանաչվել 2003թ.-ի հունիսի 6-ի նիստում հաստատված ԵՊՀ ֆակուլտետի կանոնակարգը: Նա նշեց, որ նոր կանոնակարգի համաձայն մեթոդական խորհուրդը ձևավորվում է ֆակուլտետի յուրաքանչյուր ամբիոնից՝ ընդգրկելով պրոֆեսորադասախոսական կազմի մեկական ներկայացուցիչ, որոնցից էլ տնօրենը նշանակում է մեթոդական խորհրդի նախագահին: Ս. Պետրոսյանը նշեց, որ քանի որ Ֆարմացիայի ինստիտուտն ունի 3 ամբիոն, հետևաբար անհրաժեշտություն է առաջացել ընտրել մեթոդական խորհրդի նոր կազմը և վերահաստատել նոր կանոնակարգը:

Ելույթ ունեցան՝

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սաղյանը, ք.գ.թ. Ս. Վարդապետյանը, ք.գ.թ. Ա. Մկրտչյանը, ք.գ.թ. Կ. Պետրոսյանը, ք.գ.թ. Ս. Շեյրանյանը, ովքեր առաջարկեցին ք.գ.դ. Ռուբեն Հովհաննեսյանի, կ.գ.թ. Անահիտ Հովհաննիսյանի և ք.գ.թ. Սաթենիկ Պետրոսյանի թեկնածությունները՝ մեթոդական խորհրդի կազմում ընդգրկելու համար: Ա. Սաղյանը առաջարկեց մեթոդական խորհրդի նախագահ նշանակել Ս. Պետրոսյանին:

Որոշեցին՝ (միաձայն)

1. Հիմք ընդունելով ԵՊՀ գիտական խորհրդի թիվ 6/4 որոշումը՝ (առ 30.03.2017թ.) վերահաստատել Ֆարմացիայի ինստիտուտի մեթոդական խորհրդի հետևյալ կազմը՝

Նախագահ՝	ք.գ.թ. Ս. Պետրոսյան
Անդամներ՝	ք.գ.դ. Ռ. Հովհաննեսյան
	կ.գ.թ. Ա. Հովհաննիսյան:

2. Վերահաստատել Ֆարմացիայի ինստիտուտի մեթոդական խորհրդի կանոնակարգը:

Գիտական խորհրդի նախագահ՝
տնօրենի պաշտոնակատար,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ, պրոֆ.

Ա. Սաղյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ ք.գ.թ.

Ա. Դադայան